ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 օգոստոսի 2024 թվականի N 1211 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N 895-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների 1-ին մասերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 28-ի «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 895-Ն որոշման՝

1) 2-րդ կետի 7-րդ ենթակետը «մասնագիտական» բառից առաջ լրացնել «կենսաթոշակի չափը հաշվարկելու համար ստաժում,» բառերով.

2) N 2 հավելվածում՝

ա. 1-ին կետում «9-12-րդ» բառերը փոխարինել «9-12.1-ին» բառերով,

բ. 12-րդ կետում «մասնագիտական ստաժում» բառերը փոխարինել «կենսաթոշակի չափը հաշվարկելու համար ստաժում կամ դատավորի պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածում» բառերով.

3) N 3 հավելվածը 14-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 14.1-ին կետով.

«14.1. Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա Եվրասիական տնտեսական միության դատարանի դատավորի պաշտոն զբաղեցրած անձի կենսաթոշակի չափը հաշվարկելիս՝

1) «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով անձի զբաղեցրած պաշտոնների համար սահմանված առավելագույն գործակիցը որոշելու համար հիմք է ընդունվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 28-ի N 895-Ն որոշմամբ հաստատված N 7 հավելվածում նշված՝ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի պաշտոն զբաղեցրած անձի համար «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանված համապատասխան գործակիցը.

2) հավելավճարի չափը հաշվարկվում է դատավորի (այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության դատարանի դատավորի) պաշտոնում աշխատանքային ստաժի յուրաքանչյուր տարվա համար պաշտոնային դրույքաչափի 2 տոկոսի չափով: Հավելավճարի գումարը չի կարող գերազանցել պաշտոնային դրույքաչափի 30 տոկոսը:».

4) N 7 հավելվածի վերնագիրը «ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ» բառից առաջ լրացնել «ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՉԱՓԸ ՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍՏԱԺՈՒՄ,» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

08.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ